

մէկ մասը ազատ ճամփայ ունելով սկսաւ փախչել, իսկ միւսը փակուած Թեոդորոսի եւ եկեղեցւոյ մէջ ջախջախեցաւ բոլորովին եւ զրեթէ անհետացաւ: Այս դիւրին յաղթութեան վրայ Թեոդորոս ինք գարմացած կը մտածէր, երբ արքունի դռան կողմէն երեւցաւ փոքրիկ խումբ մը կայսերական թիկնապահաց, որոց գլուխը կանգնած հասաւ Երիզացին եւ հրաւիրեց Ռշտունին եւ իւր զօրքը կայսերական պալատը՝ ներկայանալու երիտասարդ կայսեր:

Դեռ պատանի մ'եր կայսրը, շփոթութիւն եւ երկիւղ երեսին վրայ նկարուած էին, հագիւ գահը բարձրացած՝ կը տեսներ թէ այն մարդը Վաղենտին, որ իւր թագաւորութեան առաջին զօրծիքն եղած էր, առաջին գաւաճանն էր, ուստի բնական կասկածոտ աչօք կը նայեր շուրջանակի, բայց բիւզանդական քաղաքավարութեամբ եւ կեղծաւորութեամբ գիտէր ինքզինք քօղարկել: Երբ Երիզացին իմացուց իրեն թէ՝ «Ամէն վտանգ հեռացաւ, եւ Վաղենտինի փախստական էր ի շնորհես Թեոդորոսի քաջութեան՝ որ նոյն Վաղենտինի հրամանաւ կապեալ եկէք էր Յայաստանէ», կայսրը՝ «Վաղենտինոսի գլուխը թող բերուի, հիմա՛, հիմա՛», – կ'ըսէր: Բայց նոյն միջոցին, երբ լրտեսներ եկան իմացուցին, թէ ժողովուրդն արդէն սպաններ է Վաղենտին եւ եկեղեցւոյ հրապարակին վրայ կ'այրեր նորա մարմինը, ուրախացաւ: Յարմար ժամանակ համարեց այն ատեն Երիզացին՝ Բագրատունի Ասպետին համար ինդրել, եւ հրաման եղաւ նորա աքսորանաց վերջ տալ: Նաւակներ կը թռչէին Իշխանաց կղզիքը բերելու համար Վարագտիրոց:

Միեւնոյն օրուան մէջ Ռշտունին ազատեցաւ շղթայներէ, Վաղենտինոսի զօրութիւնը խորտակեց, եւ Բիւզանդիոյ արքունեաց մէջ տեսաւ իւր տղակութեան ընկերն ու բարեկամը եւ «արտասուք կը թափէին Ասպետ ու Ռշտունեաց տերն իրարու պարանոցի վրայ, վասնզի սննդակից էին խոսրովու Պարսից արքային Դուռի»: Իսկ կայսրը Վաղենտինի տեղ զօրավար կ'անուանէր զթեոդորոս Երիզացին, Թեոդորոս Ռշտունուոյն հրաման կ'ուտար հայրենիք դառնալու եւ սուրհանդակ կը հանէր Թումայի Կոստանդնուպոլիս գալու: Իսկ Վարագտիրոցի ազատութիւն կ'ուտար Կոստանդնուպոլիս բնակելու ընտանեօք, որ դարձեալ աքսոր կը նշանակէր, վասնզի տարիներէ ի վեր հայրենի երկրին էր ծարաւի:

Այն գիշերը Երիզացւոյն պալատը ուրախութեան տօն կը կատարէին այս երեք հին բարեկամք, որ տարիներով իրարմէ հեռու բնակելով, մեծութեան եւ աքսորանաց, յաղթութեան եւ պարտութեան, արքայական շնորհից եւ նախատանաց եւ վերջապէս բախտին զանազան արկածից մատն եալ, միշտ ակնածելի եղած էին նաեւ թշնամեաց եւ արքայից: Ուստի երբ առանձին